

Վ. Ի. Լենինի ԱՌԱՋԻՆ ԿՆՆՈՒԹԻՐԱԿԱՆՆԵՐԸ
ԱՐԵՎԵԼԸԻ ԺՈՂՈՎՈՒԹՅՆԵՐԻ ԼԵՅՈՒՆԵՐՈՎ

ԻԱՅԻԿ ԱՐՐԱՀԱՐՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Ռուսերի հեղափոխական գործիչները, մոլեգնող ունակցիայի պայմաններում, մեծ զոհարության փաստեր հավաքելով գրում և հրատարակում էին Վ. Ի. Լենինին նվիրված գրքեր, գրքույկներ ու հոգվածներ¹:

1917 թ. անմիջապես հետո և հասկապես 1920-ական թվականների սկզբներին Վ. Ի. Լենինի անունն ու զաղափարները լայնորեն հայտնի դարձան Հնդկաչինի երկրներում: Չնայած ֆրանսիական զաղութային իշխանությունների արգելքներին ու հալածանքներին, վիետնամական հեղափոխականներին հաջողվեց ընդհատակում ֆրանսերենով և վիետնամերենով հրատարակել Վ. Ի. Լենինի համառոտ կենսագրությունը, նրան նվիրված գրքույկներ ու հոգվածներ, որոնք ձեռքից ձեռք էին անցնում: Նրանց ջանքերով թարգմանվեցին ու հրատարակվեցին նաև Վ. Ի. Լենինի ոչ ծավալուն մի շարք աշխատությունները: «Այդ փոքրիկ գրքույկներում,— գրում է վիետնամցի հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, գրող և գուրն Դին Թհին,— հղոր գաղութատերերն իրենց համար մահացու վտանգ էին տեսնում: Նրանք պարտքներում մտցրել էին ընթերցանության հասուկ գրքեր, ազոթագրքերի պես մի բան, որոնք զրպարտություն էին պարունակում Լենինի և Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխության հասցեին: Սակայն այդ բոլոր ձգտումները տալիս էին հակառակ արդյունքը: Ժողովրդի մեջ ավելի էր աճում Լենինի հեղինակությունը: Մեծ հեղափոխականի գաղափարները, որոնցից այդքան վախենում էին իմպերիալիստները, տիրում էին գաղութային ժողովուրդների մտքերի վրա»:

Վիետնամցի ուսումնասիրող Թհինգ Թհուին հաջողվել է պարզել, որ նշանավոր գրող, մեծ հայրենասեր, հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարի ներոս Ֆան Բոյ Տյաուն Հոկտեմբերյան հեղափոխության և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի մասին ավելի շատ և ճիշտ լուրեր իմանալու նպատակով անցել է Չինաստան, հասել Պեկին և երիտասարդ սովետական հանրապետության ղեսպանատան աշխատողներից մանրամասն ու հավաստի փաստեր հավաքելով գրել և 1922 թ. հրատարակել է Վ. Ի. Լենինի առաջին ընդարձակ կենսագրականներից մեկը՝ Վիետնամում²:

Վիետնամական հրապարակախոսության մեջ առաջնային տեղ և կարևոր նշանակություն ունեն Հո Շի Մյնի (եզուեն Սյ Կուկ)՝ Վ. Ի. Լենինին նվիրված

¹ Հոգվածը շարադրված է զերագանցապես սովետական հրատարակությունների հիման վրա:
² Нгуен Дин Тхун. Он указал путь к свободе («Современный Восток», 1953, № 4, с. 18).
³ Н. Н. Никулин. Ленин во Вьетнаме («Народы Азии и Африки», 1970, № 2, с. 83).

ջերմ հողվածները, Արևելքի աշխատավորության անհաղթ փայլուն շատ իմանալ մեծ առաջնորդի մասին, պատահական չէր: «Եթե լենինը Արևմուտքի պրոլետարիատի համար առաջնորդ է, լիդեր, ուսուցիչ, — դրել է Հո Շի Մինը, — ապա Արևելքի ժողովուրդների համար նա ավելին է: Նրանց համար, եթե կարելի է այսպես արտահայտվել, նա սրբություն է»³:

Ճապոնիայի կառավարող վերնախավը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերից թշնամական դիրք զբաղեց սովետական իշխանության և Վ. Ի. Լենինի նկատմամբ: Չնայած դրան, Ճապոնիայում մեծ էր հետաքրքրությունը Հոկտեմբերյան հեղափոխության և Վ. Ի. Լենինի նկատմամբ: 1917 թ. «Սինյակա» ամսագրում հրատարակվեց Վ. Ի. Լենինի «ԽՍՀՄ-ի խնդիրների մասին ռուսական հեղափոխությունում» ռեֆերատը, որին կցված էին հեղինակի մասին համառոտ կենսագրական տեղեկություններ: Հետագայում՝ 1921 թ., Յակամավա ամուսինները հրատարակեցին «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատությունը, որին նույնպես կցել էին Վ. Ի. Լենինի համառոտ կենսագրականը⁴: Սկսած 1921 թ., մինչև իշխանությունների կողմից փակվելը, Հոկտեմբերյան հեղափոխության հանճարեղ առաջնորդի մասին ճապոնական կենսագրական հարուստ տեղեկություններ էր տպագրում «Տանեմակու խիտո» ամսագիրը:

Վ. Ի. Լենինի կենսագրության վերաբերյալ քսանական թվականների սկզբին հետաքրքիր փաստեր և տեղեկություններ են հաղորդել Ճապոնիայի կոմունիստական կուսակցության հիմնադիր Կատայամա Սենը⁵, նրա մերձավոր ղեկավարներ Տագուտի Ունձոն⁶, Յիոսիդա Կաձիմեն և ուրիշներ: Յի. Կաձիմեն, որը 1922 թ. հանդիպել է Վ. Ի. Լենինին և զրուցել նրա հետ, «Գրառումներ Լենինի նետ ունեցած հանդիպումից» գրքում վառ, ջերմ գույներով է նկարագրում Լենին-մարդուն, նրա բնավորության պարզությունը, նրա հանճարը⁷:

Ճապոնիայի բուրժուական մամուլում տպված Վ. Ի. Լենինի կենսագրականներից ուշադրության արժանի են Ֆուսե Կացուձոյի և Նախիրա Ռյոի հղվածաշարերը⁸: Հատկապես հետաքրքրական է «Տոկիո Ասախի» թերթում 1918 թ. սեպտեմբերին հրատարակված «Լենինը և ռուսական հեղափոխությունը» հոդվածաշարը, ուր տաղանդավոր լրագրող Օբա Կանոն Վ. Ի. Լենինին նկարագրում է որպես նոր օրերի հերոս, որը գտնվում է մասսաների կյանքի հորձանում, ապրում և աշխատում է նրանց հետ, նրանց համար⁹:

Վ. Ի. Լենինի կյանքի և հեղափոխական գործունեության մասին օրյակտիվ լուրերը կործանական ընթերցողին առաջինը հասցրեց «Խոնա Իլոն» թերթը՝

³ Хо Ши Мин, Избранные статьи и речи, М., 1959, с. 89.

⁴ А. И. Мамонов, Ты живешь во мне («В. И. Ленин и литература зарубежного Востока», М., 1971, с. 24).

⁵ Сэн Каяма, Статьи и мемуары, М., 1959, с. 170—175.

⁶ Тагути Ундзо, Через Красную площадь («За рубежом», 1959, № 16, с. 7).

⁷ В. Цветов, Наш корреспондент сообщает из России («Юность», 1959, № 5 с. 60).

⁸ И. Латишев, Эхо Октября в Японии («Азия и Африка сегодня», 1962, № 11, с. 7).

⁹ А. И. Мамонов, նշվ. աշխ., էջ 223.

«Ով է նիկոլայ Լենինը»¹⁰ ընդարձակ հոդվածաշարով (1921 թ. հունիսի 3—սեպտեմբերի 31)։ Հոդվածաշարի առաջաբանում գրված է. «Կորեացիները, որոնք ապրում են վերափոխումների դարում և իրենք էլ սուր կարիք ունեն վերափոխումների, պետք է լավ իմանան լենինյան ուսմունքի բովանդակությունը և նրա ճակատագիրը, նիկոլայ Լենինի կյանքն ու գործունեությունը»¹¹։ «Խոնա Իլբոն» հատկապես ընդարձակ էջեր է նվիրել Վ. Ի. Լենինի կյանքի ու գործունեության ամենաբուռն էտապին՝ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանին։ Շատ անկեղծ և անմիջական է հեղափոխության առաջնողին թերթի տված գնահատականը. «Լենինն այսօր պարծել է նոր ոգու խորհրդանշելը, նա իսկական հայր է ժողովրդի համար, այնպիսի հայր, որն ապրում, մտածում և աշխատում է հանուն աշխատավոր ժողովրդի, հոգում է նրա հոգսերը։ Նա ժողովրդի հայր է և՛ խաղաղ պահին, և՛ ճգնաժամի։ Ինչու են միլիոնավոր տղամարդիկ և կանայք պատրաստ տալու իրենց կյանքը հանուն Լենինի։ Որովհետև Լենինը նրանց բարեկամն է, ընկերը»¹²։ «Ով է նիկոլայ Լենինը» հոդվածաշարը Կորեայում մեծ արձագանք գտավ։ Շատ թերթեր ու ամսագրեր արտատպեցին այն՝ իրենց մեկնաբանություններով հանդերձ։

1922 թ. Սեուլում լույս տեսավ «Ռուսական հեղափոխության պատմությունը և Լենինը» գիրքը, որի շապիկի վրա տպագրված էր մեծ առաջնորդի լուսանկարը¹³։

Վ. Ի. Լենինի՝ Կորեերենով հայտնի երկրորդ կենսագրությունը լույս է տեսել 1933 թ., «Սին կենդան» ամսագրում՝ «Լենինի հյանքը մինչև հեղափոխությունը և հեղափոխությունից հետո» վերնագրով։ Սրա հեղինակը ևս չի համարձակվել իր անունը տալու։ Այս կենսագրականում հեղինակն ընդարձակ տեղ է տվել նաև Վ. Ի. Լենինի անձնական հատկանիշներին։ Ինչպես գրել է հեղինակը, «նա ուներ դասակարգային թշնամիներ, բայց նա չունեցավ անձնական թշնամիներ։ Բարոյական տեսակետով նա մարդ էր շատ հաղվազուտ և վերին աստիճանի պարզ ու հասարակ, համեստ բնավորության և ինքնամոռաց նվիրվածության տեր մարդ»¹⁴։

Հոկտեմբերյան հեղափոխության զաղափարները սկսեցին Չինաստան թափանցել 1918—1919 թթ.։ Պատահական չէ, որ հեղափոխության հանճարեղ առաջնորդի անունը դարձավ հարազատ և շուրթից շուրթ անցավ հենց այդ ժամանակներից սկսած։ 1918 թ. մարտին «Դուֆան» ամսագրում, Չինաստանում առաջին անգամ, լույս տեսավ Վ. Ի. Լենինի կենսագրությունը, որը կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ վերահրատարակվեց¹⁵։ Վ. Ի. Լենինի մասին կենսագրական հարուստ տվյալներ են տպագրվել նաև «Չին Բաո» ամսագրում։ Ուշագրավ են Վ. Ի. Լենինի այն կենսագրականները, որոնք տպագրվել են «Յոկեֆան յույ գայցզաոում» (1919 թ. մարտի 24), «Սյուե ղենում»

¹⁰ Ընդհուպ մինչև 1930 թ. վերջը Արևելքի գրեթե բոլոր երկրներում Վ. Ի. Լենինին նվիրված գրքերում ու հոդվածներում հեղինակները նրան բացառապես անվանում են «նիկոլայ Լենին»։

¹¹ В. П. Пак, Коре́йская легальная печать 20-ых—начала 30-ых годов о В. И. Ленине («Народы Азии и Африки», 1970, № 2, с. 162).

¹² Նույն տեղում, էջ 163։

¹³ Նույն տեղում։

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ А. Г. Криво́в, К библиографии переводов издания В. И. Ленина на китайском языке (1919—1921), («Народы Азии и Африки», 1970, № 2, с. 115—116).

(1919 թ. «գոստոս»), «Գուանդանում» (1920 թ. նոյեմբերի 1) և այլ ամսագրերում ու թերթերում¹⁶։

1921 թ. «Ժենտին Չուբան-շի» հրատարակչությունը, որը ստեղծել էին չին կոմունիստներն ու առաջադեմ գործիչները, առանձին գրքով լույս բնծայեց Վ. Ի. Լենինի ընդարձակ կենսագրությունը։

Վ. Ի. Լենինի մասին հաճախ և շեշտված չերմույթյամբ ու ոգևորությամբ էր գրում չին մեծ հեղափոխական գրող, չինական դրականության մեջ սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր Ցյույ Ցյու-բոն, որը Հոկտեմբերյան հեղափոխությունը հաջորդած տարիներին գտնվում էր Սովետական Ռուսաստանում։ Ցյույ Ցյու-բոն այն գրողներից էր, որոնք շարունակեցին Ջոն Ռիդի ազնիվ գործը, աշխարհի ժողովուրդներին հասցնելով Հոկտեմբերի ու նրա առաջնորդի անաղարտ կերպարը։ Նա այն երջանիկներից էր, որ բախտ ունեցավ տեսնելու մեծ առաջնորդին և զրուցելու նրա հետ։ Այդ հանդիպումից հետո Վ. Ի. Լենինի անունը դարձավ նրա ստեղծագործության հիմնական թեման։ Չին ժողովուրդը հատկապես ջերմ բնությունեց նրա «Լենին», «Լենինն ու սոցիալիզմը» գրքերը։ «Լենինի անմահությունը, — գրել է Ցյույ Ցյու-բոն, — արմատապես տարբերվում է բոլոր մյուս հերոսների և մեծ մարդկանց անմահությունից։ Լենինն իրենից հետո թողեց ոչ միայն բարի անուն, ոչ միայն բարի հիշատակ իր անձնավորության, իր բարեգործությունների, իր ոգու մասին, որոնց առաջ պատկառանքով խոնարհվելու են եկող սերունդները, նա իրենից հետո թողեց պրոլետարական հեղափոխական կուսակցություն, նոր պրոլետարական պետություն։ Ոչ մի ուժ չի վիճակի չէ և չի կարող Լենինի անունը սրբել մարդկության գիտակցության միջից»¹⁷։

Վ. Ի. Լենինի և նրա հեղափոխական գաղափարների ամենաակտիվ պրոպագանդիստներից էր Չինաստանի կոմկուսի հիմնադիրներից մեկը՝ Լի Դա-չժանը։ Նա առաջիններից էր, որ 1921 թ. գրեց և հրատարակեց Վ. Ի. Լենինի կենսագրությունը։ Լի Դա-չժանը մեծագույն հարգանքով է խոսում Վ. Ի. Լենինի մասին՝ նրան համարելով «ամենամարդկային և ամենաազնվագույն մարդը ողջ աշխարհում»¹⁸։

Վ. Ի. Լենինի մահվան օրերին «Մինգո Ժիբաոս թերթի» Վ. Ի. Լենինի կենսագրությունը նվիրված «Գիտակցություն» վերնագրով ծավալուն հոդվածներից հետո, նրա խմբագրությունը, հաշիվի առնելով ընթերցողների բուռն հետաքրքրությունը մեծ առաջնորդի կյանքի ու հեղափոխական գործունեության նկատմամբ, բացեց հատուկ էջ, ուր «Լենին» ընդհանուր խորագրի տակ համարից համար հոդվածներ էին տպագրվում մեծ առաջնորդի կյանքի ու գործունեության վերաբերյալ¹⁹։

Հնդիկ ընթերցողները նույնպես առանձնահատուկ հետաքրքրություն էին ցույց տալիս Վ. Ի. Լենինի գաղափարների ու անձնավորության նկատմամբ։ Այդ հետաքրքրությունն աճում էր բուրժուական մամուլի հակալենինյան պրոպագանդայի ուժեղացմանը դուրսհանալով Հնդկաստանի առաջադիմական մամուլն աշխատում էր անել հնարավոր ամեն բան, որպեսզի հնդիկ աշխատավոր-

¹⁶ М. Е. Ш н е й д е р. Творческий путь Цюй Цю-бо, М., 1954, с. 48.

¹⁷ Նույն տեղում, էջ 49.

¹⁸ Նույն տեղում։

¹⁹ Цзян Чунфан. Издание и распространение произведений В. И. Ленина в Китае («Издание и распространение произведений В. И. Ленина», М., 1960, с. 279—281).

ները ճիշտ պատկերացում ունենան և հնարավորին չափ շատ բան իմանան Վ. Ի. Լենինի և նրա գլխավորած հեղափոխության մասին: Այլահաբաղում անգլերենով հրատարակվող «Լիդեր» թերթը, որն արտահայտում էր հայրենասեր մտավորականության և ազգային բուրժուազիայի տրամադրությունները, հավանաբար առաջինը Հեղկաստանում, 1918 թ. հունվարի 10-ին Վ. Ի. Լենինի մասին կենսագրական համառոտ տեղեկություններ հրատարակեց՝

1921 թ. հեղիկ հայտնի լրագրող Կրիշնա Ռաոն մասսայական տեղերի և հալածանքի պայմաններում վտանգելով անձնական ազատությունն ու կյանքը, Ռուսաստանում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր հրատարակված նյութերի հիման վրա կազմեց և անգլերենով հրատարակեց «Նիկոլայ Լենին. նրա կյանքը և գործունեությունը» գիրքը: Բոլոր առաջաբանում հեղինակը գրում է, որ թիր նպատակն է հեղիկ եղբայրներին անկեղծորեն ներկայացնել Ռուսաստանի հեղափոխական, բուլժեկյան մեծ առաջնորդի հոյակապ կյանքը²⁰: Ռաոն մեծ դժվարությամբ ձեռք էր բերել և գրքի առաջին էջում տեղագրել առաջնորդի լուսանկարը: Հայտնի է, որ անգլիական գաղութարարները, ինչպես նաև գանդիզմի գաղափարախոսության կողմնակիցների ռեակցիոն թեր, հաճախ էին Մ. Գանդիի «բռնության շղիմելու» տեսությունը հակադրում լենինիզմին և աշխատում էին ստահող լուրեր տարածել Վ. Ի. Լենինի և նրա գաղափարների մասին: Ռեակցիայի տարիներին Ռաոն համարձակ հանդես էր գալիս այդ գրադարությունների դեմ, գրելով մասնավորապես հետևյալը. «Հայտարարել, որ Լենինը պաշտպանում է բռնությունը նրա համար, որ նա ցանկանում է միայն բռնություն կատարվի, դա նշանակում է գրադարել նրան: Լենինը ժխտում է բռնությունը բանդիից ոչ պակաս: Բայց երբ բռնակալությունը կիրառում է բռնության մեթոդներ, Լենինը չի տատանվում դրան պատասխանել բռնության մեթոդներով: Լենինը գիտի, որ պայքարում է պրոլետարիատի երջանկության համար և պատրաստ է իր կյանքը տալ հանուն ամբողջ աշխարհի աշխատավորների երջանկության»²¹: «Նիկոլայ Լենին. նրա կյանքը և գործունեությունը» գրքի վերահրատարակության մեջ Կ. Ռաոն ավելացրել է «Լենինի և Գանդին» գլուխը, ինչպես նաև, որպես հավելված, գրքին կցել է Վ. Ի. Լենինի երկու հոդվածները:

Վ. Ի. Լենինին նվիրված հեղկական գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Ջավահարլալ Ներուի գրչին պատկանող մի քանի գրքույկներն ու հոդվածները: Վ. Ի. Լենինի մասին Ջ. Ներուն առաջին անգամ գրել է 1927 թ., Սովետական Միություն այցելելուց հետո: Իր անձնական դիտումների և փաստական նյութերի ուսումնասիրության հիման վրա նա գրել և հրատարակել է «Սովետական Ռուսաստան» գիրքը²², որի մի ընդարձակ գլուխը նվիրված է Վ. Ի. Լենինին և նրա գաղափարների գնահատմանը: Այս գլխում, խոսելով հանճարեղ մտածողի ստեղծագործությունների ուսումնասիրության անհրաժեշտության մասին, Ջ. Ներուն դա խիստ կարևոր է համարում նաև Հեղկաստանի համար, շնայած ինքը շատ էր հեռու մարքսիզմ-լենինիզմից, նա հատ-

²⁰ П. М. Пастухов, Первые сведения о В. И. Ленине и Октябрьской революции в индийской прессе («Народы Азии и Африки», 1970, № 2, с. 155).

²¹ K. V. Krishna Rao, Nicolaj Lenin, his life and work, Madras, 1921, p. 21.

²² Նույն տեղում:

²³ J. Nehru, Soviet Russia, Bombay, 1927.

կապես ընդգծում է բանվոր դասակարգի մեծ առաջնորդի բնավորության և գործունեության այն կողմերը (վճռականություն, հետևողականություն, ճկունություն, համարձակություն և այլն), որոնցից, նրա կարծիքով, ղուրկ էին Հեղկաստանի ազատագրման համար պայքարող գործիչներին շատերը²⁴։ Վ. Ի. Լենինին նվիրված էջերում Զ. Ներուն շեշտում է լենինյան հեղափոխական տակտիկայի ձկունությունը։ Վ. Ի. Լենինի կոչերը՝ չհրաժարվել պայքարի պառլամենտական ուղուց, ևթե դա պահանջում է հեղափոխության շահը, ըստ Զ. Ներունի, պետք է դաս լինի այն հեղիկ հեղափոխականների համար, որոնք անտեղի վիճում են պետական խորհուրդ մտնելու շուրջը²⁵։ Շատ բարձր գնահատելով Վ. Ի. Լենինին ու նրա հեղափոխական գաղափարները, Զ. Ներուն չի մոռանում խոսել նաև հեղիկ աշխատավոր ժողովրդի վրա նրա ունեցած մեծ ազդեցության մասին։ «Հեղկաստանի բանվոր դասակարգը և գյուղացիությունը,— գրում է Զ. Ներուն,— Հեղկաստանի ազգային-ազատագրական շարժման մարտիկները ողջունեցին Լենինի այդ գաղափարները։ Լենինը նրանց համար դարձավ բարեկամ և առաջնորդ... Լենինը նրանց համար կմնա որպես հանձարեղ մտածող և մարդկության բարերար»²⁶։ Զ. Ներուն հատկապես նշում է Վ. Ի. Լենինի՝ աշխարհում վայելած արտակարգ մեծ ժողովրդականությունը։ «Հեղկաստանում Լենինին անպայման կղասեին սրբերի շարքը... Ռուսաստանի ժողովուրդը Լենինին ցույց է տալիս առավել մեծ պատիվ, նա սիրում է Լենինին և նրան համարում է իրենք։ Նա Ռուսաստանում յուրաքանչյուրին եղբայր և հարազատ... մեկն է, որին կարելի է դիմել զովար ժամանակ»²⁷։

Հեղիկ առաջադեմ լրագրող Ռայիշանդրա Վերման 1919 թ. Բենարեսում հինգու լեզվով հրատարակել է Վ. Ի. Լենինի կենսագրությունը²⁸։ Նույն 1919 թ. Կանփուտում «Շրջանավարտ» ծածկանունով մի հեղինակ, դարձյալ հինգու լեզվով, հրատարակել է «Կոմունիզմ» վերնագրով մի գրքույկ, որն ամբողջությամբ նվիրված է Վ. Ի. Լենինին։ Նրանում շատ բարձր է գնահատված Վ. Ի. Լենինի դերը որպես Հոկտեմբերյան հեղափոխության ղեկավարի²⁹։

1919 թ. Վ. Ի. Լենինին նվիրված ընդարձակ հոդվածներով «Պրատապալա» շաբաթաթերթում հանդես է եկել Հեղկաստանի ազգային-ազատագրական շարժման այնպիսի նշանավոր գործիչ, ինչպիսին է Գանեշ Վիդյարահիին։ «Վարթման» թերթի խմբագիր Ռամ Ավաստին Վ. Ի. Լենինին նվիրել է երկու գիրք։ Դրանցից առաջինը՝ տպագրված 1920 թ., նվիրված է Հոկտեմբերյան հեղափոխությանը և նրա առաջնորդին։ Գրքի վերնագիրն է «Ռուսական հեղափոխությունը»³⁰։ Վ. Ի. Լենինին նվիրված երկրորդ գիրքը՝ դարձյալ հինգու լեզվով, Ռ. Ավաստին հրատարակել է Կալկաթայում՝ 1921 թ.։ Այն ունի «Բուլ-շևիկյան հրաշագործը կամ Լենինի կյանքը և մտքերը» խորագիրը։ Գրքի շապիկի վրա, Վ. Ի. Լենինի լուսանկարի կողքին, գրված է «Լենին» կոմունիզմ հռչակող տրիումֆատորը, աշխարհում անհավասարության ոչնչացնողը»³¹։

²⁴ Նույն տեղում, էջ 21։

²⁵ Նույն տեղում, էջ 41։

²⁶ Նույն տեղում, էջ 21։

²⁷ Նույն տեղում, էջ 41։

²⁸ Н. С у ч к о в, Почетное и гордое имя («Азия и Африка сегодня», 1970, № 4, с. 60)։

²⁹ Նույն տեղում, էջ 60—61։

³⁰ Л. В. М и т р о х и н, Индия о Ленине, М., 1970, с. 68։

³¹ Նույն տեղում, էջ 61։

Պարզ և մառչելի լեզվով Ռ. Ավստրին ընթերցողին պատմում է այն մասին, թե ինչպես է Վ. Ի. Հենինը ստեղծել կուսակցություն, ինչպես է ղեկավարել հեղափոխությունը, ինչպես է պայքարում ներքին և արտաքին հակահեղափոխության դեմ, ինչպես է բարդ իրավիճակում գլխավարում նոր պետության կառուցումը։ Ռ. Ավստրին պրոմ է, որ Վ. Ի. Հենինը հանդես է գալիս հանուն շահագործվող և զաղութային ժողովուրդների ազատագրման և ապա ավելացնում. «Նա մտածում է Հեղկաստանի մասին»³²։

1921—1924 թթ. Հեղկաստանի տարբեր քաղաքներում հինգու լեզվով լույս տեսան ևս մի շարք այլ գրքեր՝ նվիրված Վ. Ի. Հենինին և Հոկտեմբերյան հեղափոխությանը։ 1921 թ. լույս տեսավ Սոմ Վիդյայանաքարի «Վերածնված Ռուսաստան», 1923 թ.՝ Նա՝ Վիշվամբհարի «Մեծ փերափոխումներ Ռուսաստանում», 1923 թ.՝ Պրան Վիդյայանաքարի «Կոլեկտիվ իշխանությունը Ռուսաստանում» գրքերը և այլն³³։ 1934 թ. բանաստեղծ և արձակագիր Սադանանար Բհարթին հրատարակեց «Մահաթմա»³⁴ Հենին»³⁵ գիրքը՝ նվիրված Վ. Ի. Հենինի կյանքին ու գործունեությանը։

1918 թ. հունվարի 29-ին Հեղկաստանի ազգային խոշոր ամսագիր «Քենսարին», որը մարաթհի լեզվով Պունա քաղաքում (Մահարաշտրա) հրատարակում էր ազգային շարժման խոշորագույն լիդեր Բալ Թիլաքը, գրեց. «Մենք հաղորդում ենք Հենինի կյանքի կարևոր փուլերը, բանի որ հիմա ողբական այդ շատ մեծ մասսայականություն վայելող առաջնորդի հասցեին մղվում է վնասակար պրոպագանդա... Հենինը հանդես է գալիս հանուն խաղաղության... Հենինը գտնում է, որ պատերազմող կողմերի բուրժուազիան պաշտպանում է իր ևսասիրական շահերը, որը խորթ է ամբողջ աշխարհի աշխատավորների շահերին։ Հենց բուրժուազիան է, ասում է Հենինը, սակայն պատերազմը, իսկ աշխատավորությունը խաղաղություն է ուզում»³⁶։ Այնուհետև, Բ. Թիլաքը ցույց է տալիս, թե ինչի շնորհիվ բուրժուական կարողացան պրավել քաղաքական իշխանությունը Ռուսաստանում։

Վ. Ի. Հենինի առաջին կենսագրականներից է 1922 թ. Բոմբեյում լույս տեսած «Նիկոլայ Հենին. ռուսական դեմոկրատիայի հիմնադիրը» գիրքը, որի հեղինակն է հայտնի հրապարակախոս և լրագրող Ռամ Բհիգեն։ Նա իր հուշերում պատմում է, որ Վ. Ի. Հենինին նվիրված գիրքը գրելիս նրան օգնել են Բ. Թիլաքը և նշանավոր հեղափոխական Սենափաթի Բհափաթը³⁷։ Այս գիրքը դրվել է 1919—1920 թթ. և պետք է լույս տեսներ 1921 թ. Պունայում, սակայն տպարանում բռնկված սպառնական» հրդեհն ամբողջությամբ ոչնչացնում է նրա մամուլները։ «Պատահական» նոր հրդեհից խուսափելու նպատակով գրքի տպագրությունն իրականացվում է Բոմբեյում, Ուշագրավ է այս գրքի առաջաբանը։ Այն գրել է Բ. Թիլաքի դինակից, «Մարաթհի» շաբաթաթերթի խմբագիր Կամոդար Կոկհալը, որը կոչ է անում «ուսումնասիրել Հենինի կյանքը, գործունեությունը և նրա փիլիսոփայությունը»³⁸։

³² Նույն տեղում, էջ 70։

³³ Նույն տեղում։

³⁴ «Մահաթմա» նշանակում է «սուրբ հոգի»։

³⁵ Մ. В. Минтрохин, նշվ. աշխ., էջ 68։

³⁶ Шрипат Ганеш Сардесаи. Индия и революция в России. М., 1967. с. 32։

³⁷ Մ. В. Минтрохин, նշվ. աշխ., էջ 89—90։

³⁸ Նույն տեղում, էջ 91—92։

Մարաթհի լեզվով Վ. Ի. Լենինի կենսագրականներից առավել հետաքրքիրը Ռ. Բհիդեի յոթ գլխից կազմված գիրքն է՝ Ուշագրավ են «Լենինի կյանքը», «Լենինին», «Նրա գաղափարախոսությունը և աշխատությունները», «Ի՞նչ են առում ականատեսները» գլուխները: Գրքի «Նրա գաղափարախոսությունը և աշխատությունները» գլուխը գրելիս հեղինակը մեծապես օգտվել է Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» երկից: «Եզրափակման» մեջ Ռ. Բհիդեն գրում է. «Լենինի ղեկավարությունը սոցիալական նոր կարգերի հաստատման գործում, ինչպես ինձ թվում է, բերելու է առավել նոր ու նոր պտուղներ և մի գեղեցիկ օր մարդկությունը գտնելու է ճանապարհը դեպի խաղաղություն և համընդհանուր երջանկություն: Իկյն պետության մեջ, որն ստեղծել է Լենինը, տեղ չեն ունենալու աղքատությունը, հուզումը, հոռետեսությունը և զայրույթը: Հասարակության ողջ էներգիան ուղղվելու է սոցիալական բարեկեցությանը, իսկ համաշխարհային եղբայրության յաղափարը երազանքից վերածվելու է իրականության»³⁹:

Ինտանձին գրքերից բացի, Վ. Ի. Լենինի կյանքի և գործունեության վերաբերյալ մարաթհի լեզվով ընդարձակ հոդվածաշարեր են տպագրվել նաև մամուլում: Դրանցից առավել հետաքրքիր են Դհունդիադեմ Ղադարի «Լենին. ուսական հեղափոխության ղեկավարը» ընդարձակ հոդվածաշարը, որը լույս էր ընծայեց «Քեսարին»՝ 1924 թ. հունվարին: Իվելի ուշ՝ 1938 թ., Վ. Ի. Լենինի շատ ավելի ընդարձակ և հավաստի կենսագրականը հրատարակեց Մահա-բաշտրալի հակազադութային շարժման առաջնորդ, նշանավոր հեղափոխական Վինայակա Բհուսկուտեն:

Սկսած 1921 թ. մարտից «Սանկհյա» շաբաթաթերթում երիտասարդ հեղափոխական Սաշին Սանյալայը բենգալերենով հրատարակեց Վ. Ի. Լենինի՝ ժամանակին ամենամանրամասն և բովանդակային կենսագրականներից մեկը, որի տպագրությունը տեղեց մոտ երկու տարի: Պատահական չէ, որ անգլիական գաղութային իշխանությունները Ս. Սանյալային «կոմունիստական գործունեության» մեղադրանքով ձերբակալեցին և դատապարտեցին տաժանակրության:

Հեղկաստանում բենգալերենով Վ. Ի. Լենինի առաջին կենսագիրներից էր Լ. Գհոշը, որը 1921 թ. հրատարակեց առանձին գրքույկ՝ նվիրված Վ. Ի. Լենինի կենսագրությանը: Այդ գրքույկում կային նաև այսպիսի տողեր. «Համաձայն Լենինի տեսակետի, հասարակության աղքատ վիճակը պետք է բացատրել այն փաստով, որ արտադրության բոլոր միջոցները և հողը գտնվում են կապիտալիստների և կալվածատերերի ձեռքին: ...Լենինը գտնում է, որ այդ վիճակից գուրս դալ կարելի է, եթե... շահագործողների կուտակած հարստությունը խլվի և հավասարապես բաժանվի հասարակության բոլոր անդամների վրա»⁴⁰, Ինհամեմատ ավելի ծավալուն ու փաստային է հայտնի հրապարակախոս և լրագրող Լամույա Լդիհարի գրած Վ. Ի. Լենինի կենսագրականը, որը պարբերաբար հրատարակվեց «Լիթթաշոթի» շաբաթաթերթում՝ 1923 թ. սկզբներին: 1921 թ. Կալկաթայում, «Բիշլի» թերթում բենգալերենով հրատարակվեցին նաև «Լենինը և ուսական հեղափոխությունը» հոդվածաշարը ու «Լենինի կենսագրությունը» գրքույկը: Վերջինիս հեղինակը գրում է, որ հան-

³⁹ Նույն տեղում, էջ 93:

⁴⁰ Նույն տեղում, էջ 100—101:

Հարեգ առաջնորդի ջանքերն ուղղված են աշխատավոր, շարքաշ ժողովուրդների փրկելուն և շահագործողների կամայականությունները վերացնելուն: Նույն 1921 թ. և հաջորդ տարիներին բենդալիայում Վ. Ի. Հենինի կյանքին ու զաղափարներին նվիրված հոգվածներով և գրքույկներով հանդես եկան Հեքիմեթ Սարքարը, Չիթիա Դասը, Ամուլյա Աղիհարը և ուրիշներ⁴¹:

1923 թ. Հարավային Հնդկաստանի Մայսուրի Հուբլի փոքրիկ քաղաքում հարավահնդկական կաննադա լեզվով լույս տեսավ հրապարակախոս Ռամա Գուրսկիի «Ռուսաստանի շքավորներին ազատագրողը՝ Նիկոլայ Հենինը» գիրքը, որը մեծ առաջնորդի՝ Հարավային Հնդկաստանում լույս տեսած առաջին կենսագրականներից էր⁴²: Խոսելով համաշխարհային մասշտաբով աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվացման մասին, հեղինակը գրում է, որ «հենց այդ ժամանակ է, որ ասպարեզ եկավ համաշխարհային ճանաչում գտած մեծագույն մի մարդ, որը կանգնել է շունեոր դասի կողքին, նա աշխատավորությանը միավորելու և իր հետևից զեպի պայքար տանելու դարձանահրաշ կարողություն ունի: Պատմական այդ մեծ անհասարակ Նիկոլայ Հենինն է... իր մարտի և բյուրեղյա զաղափարներով նա ոգևորում է բանվոր դասակարգին և ուսանողությանը, նրանց պայքարի է հանում հանուն նոր ժամանակաշրջանի»⁴³:

Վ. Ի. Հենինի անունը թուրքական մամուլում առաջին անգամ երևան է եկել 1917 թ.: Սովետական պետության հիմնադրի մասին հաճախ էր գրում «Թաավիրի էֆեյար» ամսագիրը, որը 1917 թ. դեկտեմբերի 24-ին հրապարակեց մեծ Հոկտեմբերի հանճարեղ առաջնորդի համառոտ կենսագրականը և լուսանկարը⁴⁴: 1919 թ. «Բուրթուշու» ամսագիրը հաջորդաբար հրատարակեց «Ով է Հենինը», «Հենինը Մարքսի գործի շարունակողն է 20-րդ դարում» Վ. Ի. Հենինի տիտանական հեղափոխական աշխատանքը դրվատող ընդարձակ հոգվածներ⁴⁵: Փսանական թվականների կեսերին Ստամբուլում հրատարակվեցին Սադրեդդին Ջելլալի «Հենինը և լենինիզմը» և Բուրխան Ասեֆի «Մի մարդ կենսագրական գրքերը: 1925 թ. «Այդինլիք» ամսագիրը օգոստոսի համարը նվիրեց Վ. Ի. Հենինին: Ամսագրի առաջնորդող հոգվածում գրված է. «20-րդ դարում Մարքսի գործի շարունակողը Հենինն է: Ով է Հենինը, ի՞նչ է նա արել, ի՞նչ է լենինիզմը: Այս հարցերի պատասխաններին էլ մենք նվիրում ենք մեր հատուկ թողարկումը և առանձին գրքույկը: Բայց այս թնժան այնքան է լայն, որ նրա լուսաբանման համար բավարար չեն ոչ հատուկ թողարկումները, ոչ առանձին գրքույկները, ոչ էլ մի քանի էջանոց հոգվածները: Անհրաժեշտ են թեմաներ, իսկ այժմ մենք համառոտ կշարադրենք լենինյան հանճարի հիմնական յուրահատկությունները, կվերլուծենք նրա աշխատությունները, որոնք ծառայել են պրոլետարական հեղափոխության հաջողությանը»: Վ. Ի. Հենինին նվիրված այս հատուկ թողարկումից հետո ամսագրի գրեթե յուրաքան-

⁴¹ Е. П. Челішев, Образ Ленина в поэзии народов Индии («В. И. Ленин и литература зарубежного Востока», с. 125).

⁴² Л. В. Митрохин, նշվ. աշխ., էջ 86.

⁴³ Նույն տեղում.

⁴⁴ А. А. Бабзев, В. И. Ленин в турецкой литературе («В. И. Ленин и литература зарубежного Востока», с. 209).

⁴⁵ Д. Шиншанов, Рабочническо и социалистическо движение в Турции, София, 1965, с. 48.

չյուր համարում հողվածներ էին տպագրվում Վ. Ի. Լենինի մասին, քաղվածքներ էին մեջ բերվում նրա աշխատություններից, շարադրվում էր լենինյան այս կամ այն երկի համառոտ բովանդակությունը:

Մեծ առաջնորդի անունն իրանում հայտնի է եղել դեռևս մեծ Հոկտեմբերից առաջ: Իրանական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մարտիկ, հրապարակախոս Միրզա Նասրոլլա Մալիք օլ Մոթարայումին դեռևս 1907 թ. «Ռուխ-օլ-կոդս» թերթում գրել է. «Լենինն ամենից ազդեցիկ մարդն է ժամանակակից Ռուսաստանում: Նա Ռուսաստանի ժողովրդի առաջ խնդիր է դրել ջախջախել շահագործման շղթաները, շարունակել բռնակալության լուծը և կառուցել նոր Ռուսաստան: Մենք հավատացած ենք այն բանում, որ մոտիկ ժամանակներս Ռուսաստանի հորիզոնում կծագի ազատության արևը և կոզմոսի ու նոր կյանքի կկոչի բոլոր շահագործվող ժողովուրդներին»⁴⁶, Դեռևս 1914 թ. իրանական առաջագիծ հրապարակախոս Ախունդ Ֆահրալի Նաֆահանին իր «Հայտնագործում» գրքում Վ. Ի. Լենինի անունը դրեց աշխարհի խոշորագույն փիլիսոփաների շարքում⁴⁷:

Սկսած 1920-ական թվականներից բազմաթիվ առաջագիծ պարսիկ գրողներ, բանաստեղծներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական, պետական գործիչներ ցնծությամբ էին գրում Վ. Ի. Լենինի մասին՝ նրան համարելով իրանական ժողովրդի ազատարարը: Նշանավոր պարսիկ բանաստեղծ, գրականագետ, հասարակական գործիչ Մոհամեդ Թաղի Բահար Մալիք-օշ-Շոարրը դեմոկրատական կուսակցության հանձնարարությամբ 1917 թ. վերջերին Թեհրանի Մեջիթ-Շահ հրապարակում արտասանած իր նշանավոր ճառում ասաց հետևյալը. «Իրանը նման էր մի մարդու, որին խեղդում էին նրա թշնամիները՝ երկու ծայրերից քաշելով այն պարանի ծայրերը, որը փաթաթված էր այդ մարդու վզին: Այժմ գտնվել է մեկը, որը կտրելով պարանի մի կողմից, եղբայրության ձեռք է մեկնել խեղդողին... Մեր կոկորդը պարանից ազատողը Վ. Ի. Լենինն է»⁴⁸:

Իրանի հեղափոխական գաղափարախոսության վրա մեծ ազդեցություն ունեցան, անշուշտ, Վ. Ի. Լենինի պարսկերենով հրատարակված առաջին կենսագրական, «Մարքսիզմ և ուղիղ գիտելիք», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստadium» և լենինյան մյուս հանձնարող աշխատությունները:

Ինչպես խոստովանում են արաբական երկրների ազգային-ազատագրական շարժման ռազմիրանները, այդ շարժման կազմակերպման և զարգացման վրա շատ մեծ է եղել Վ. Ի. Լենինի ինչպես տեսական աշխատանքների, այնպես էլ պրակտիկ հեղափոխական գործունեության ազդեցությունը: Արաբական աշխարհում ևս աշխատավոր ժողովրդի թշնամիներն անում էին ամեն բան, որպեսզի լենինյան գաղափարները արաբ ժողովրդին շահանեն: Հակառակ դրան, արաբական ազատագրական շարժման առաջագիծ թեր ձգտում էր հասնել այն բանին, որ լենինյան խոսքի ճշմարտությունը հասնի արաբ աշխատավոր ժողովրդին: Արաբներենով հրատարակված լենինյան առաջին աշխատությունը եղել է «Պետություն և հեղափոխություն», որը լույս է տեսել

⁴⁶ А. Агехи, Иранские деятели науки и культуры о Великой Октябрьской революции («Народы Азии и Африки», 1967, № 1, с. 125).

⁴⁷ «Ленин и Иран», Баку, 1970, с. 7.

⁴⁸ А. И. Хейфец, Ленин великий друг народов Востока, М., 1960, с. 119.

1922 թ. Կահիրեում՝ «Հենինի հուշերը եվրոպական անցյալի և ներկայի սլա-տերապման մասին: Ռուսական հեղափոխության նախագահի երկր» վերնա-դրով: Գրքին կցված է նրա թարգմանիչ Ահմադ Ռիֆաաթի «Հենին» կենսագրա-կան հոգվածը: Ա. Ռիֆաաթը գրում է. «Ռուսական հանրապետության նախա-գահին կարելի է ներկա ժամանակներում համարել մեծագույն մարդը երկ-րագնդի վրա»⁴⁹:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո նրա հանձարեզ առաջնորդի պայծառ անունը հարազատ և սրտամոտ դարձավ Ասիայի և Աֆոհկալ տարրեր երկրների ժողովուրդներին համար: Նրանք Վ. Ի. Հենինի զազափարների իրականացման մեջ էին տեսնում սոցիալական և զաղութային ճնշումից իրենց ազատագրման գրավականը:

ПЕРВЫЕ БИОГРАФИИ В. И. ЛЕНИНА НА ЯЗЫКАХ НАРОДОВ ВОСТОКА

РАФИК АБРАМЯН

Резюме

Жизни и деятельности В. И. Ленина посвящено множество исследований, книг и статей, изданных как в нашей стране, так и за рубежом, в частности, в странах Востока.

В 1922 г. Фан Бой Тяу издал во Вьетнаме первую биографию Ленина. Вслед за ним вышли в свет работы Хо Ши Мина. Большой интерес представляют и работы японских биографов В. И. Ленина — Катаямы Сэн и Юсиди Кадзуме. Статьи и брошюры, посвященные биографии В. И. Ленина, в Китае начали печататься с 1918 г. Особенно тепло писал об Ильиче Цюй Цю-бо. В Индии на языках хинди, урду, бенгали, каннада, маратхи и др. вышли в свет работы Кришны Рао, Ганеша Видяратха, Рамчандра Вермы, Рама Авастхи, Джавахарлала Неру, посвященные жизни и деятельности В. И. Ленина. В 1917—1923 гг. было издано множество исследований, посвященных биографии Ильича, также в Корее, Иране, Турции, Египте и в других странах Востока.

⁴⁹ Г. Ш. Шарбагов, Образ Ленина в арабской поэзии («В. И. Ленин и литература зарубежного Востока», с. 224).